17. ՎԸԵՐՍԿԱՆ ԱՎԵՏԻՍԸ

Ինըմ ա, չինըմ, մին հըլիվեր մարթ ա ինըմ։ Ըտրան ինըմ ա մին կընեգյ։ Ըտըանց խոխա չի ինըմ։ Մարթը քյընըմ ար վըերս անըմ, կընեգյըն էլ տանը կար, տանը պըեներ ար անըմ։ Ըտրանք իտի մին թա̈հրա̈վ ապրըմ ըն։

Ընդըրանք շատ ին քընենքյ անըմ, վըեր ո̈ւրա̈նք խոխա չօնին, վըեր ո̈ւրա̈նց սըերտը դաղված ա, օջաղը հա̈նգյա̈ծ ա։

Մին դո̈նըմ էտ մարթը ծըմակըն ա քյընըմ վըերս անի։ Էտ ծըմակըմը իրեք ըըրաստրակ, վըեննեըը քյաստրա̈կ ա փըռնըմ։ Էտ ըըրաստրակներին մինը խե՛ շա՛տ ղա̈շա̈նգյ ա ՚ինըմ։

Տա էտ հըլիվերին ասըմ ա. — Ա՛յ անճանանչ վըերսկան, մըեզ պըեց թող քյինինք, մունք քյըեզ շատ լըվոթուն կանինք, քյըեզ հըետի, գյանքիտ հըետի։

Էտ հըլիվըեըը խոսկ ա տամ, վըեր պըեց կը թողի։

Էտ ըըրաստրակնին ասըմ ըն. — Քյըեզ մին տըղա կինի, ամմա ընդըրա ծընվելանը օխտը օր ետը, տու մըեռնելու յըս։

Հըլիվերը ուրխանըմ ա, ըըրաստրակներին պըեց ա թողըմ մին պայմանավ, վըեր խոխա չինի, էլհա կյա փըռնի, յետավ կյա տոնւ։

Անց ա կըենըմ մին խիլլա̈ վախտ, ըտրան մին տըղա յա ինըմ։ Կողի ինքը օխտը օրան ետը պիտի մըեռնար, ամմա էլհա շատ ա ուրխանըմ։ Վեց օր անց կընալանը ետը հա̈րը էտ տըղին անըմը Ավետիս ա տընում։ Կընգանը կանչըմ ա ասըմ. — Ա՛ կընեգյ, վըեր Ավետիսը մըծանա, տըեռնա տասը տըրեկան, ընդըրան զարկի տը-

բացուվին կոշտը կարթիլը սըվրերի, կյիրին սևըսիպտակը ճոկի, մըեղ մընան ախմախ չի մընա։ Ընդրանա ետը վըեր հենգյ տարի էլ անց կըկըենա իմ թըվանգյս կըտաս ուրան, ինձանա էլ նաղլը կանիս։

Էտ հըլիվերը օրը իրեք դոնըմ կյամ ա խոխին ըրորոցին կոշտը, չոքըմ, աղոթկ անըմ, ետավ էլ ասըմ. — Ավետիս շան, իմ հար, իմ մար քը մատաղ, մըղափուն վըեր էրգյան գյանք չօնիմ, վըեր բոյըտ տըեսնամ, վըեր էտ ըլըվալավ անըմ իրեսըտ տըեսնամ, էտ սըեվ-սըեվ աշկերըտ, էտ կըեռ-կըեռ ունքերըտ տըեսնամ։

Վըեր վերչին օրը կյամ ա, հըլիվերը քըշերը քոն իլած տեղը հրեշտակնին կյամ ըն, թա տանին։ Տա դաշանք ա անըմ, վըեր թողին՝ ուրան խոխին մին հետ պաչի։

Հըրեշտակնին թա.— Դե շուտ ըրա, թայդի յընք, օրիշներերին հետան էլ պիտինք քինիլ, հու մինակ տու չըս։

Հըլիվերը մին էլ խոխին պաչից, ասից. — Ավետիս շան, դե ինձ տանըմ ըն մըթեն աշխարքը, տու քու հոր օջաղը ավադ կանի՞ս, թըշնամու սըրտավ չանի՞ս, նամուսավ կինի՞ս, ղեյրաթավ կինի՞ս, պատիվ-հուրմաթավ կինի՞ս, քու մոր էլ լավ կը եշիս, վըեր ասին վըեչ մարթը մըեռած, անգար կընեգյ ա։

Ասըմ ա պըրծընըմ, հրեշտակնին կյամ ըն ըտրան տանըմ, մին պեցուր սարի կըլխի մին ամարաթ ա ընում, էտ ամարաթին սութունան կապըմ, մին լավ կյոսուրմ։ Թա էլլա՞ ըլըրաստրակ կը փըռնի՞ս։

Էտ հըլիվերը տըմանըմ չի, ասըմ. ա — Ամա՞ն, ա՛ հրեշտակնի, ասծու սերին, ինձ իտի թակիլ միք, լավըն էն ա, վըեր լհա՞ ըսպանիք։

Էքսը էտ հըլիվերին կընեգյը յեր ա կըենըմ, տըեսնըմ մարթը կա վըեչ։ Էն ըլըրաստրակներին խոսկավը գյուդում ա իլալ, վըեր մարթը մըեռնելու յա։ Ըսկըսըմ ա լաց ինիլը, ծընգները թակիլը։ Ըտրանա յետը մարըտրդա ապրըմ ըն։

Տըղան մըծանըմ ա, տըեռնըմ տասը տըրեկան մին դաշանգյ, շենքավ-շընորքավ տըղա, խելունք, ծըեռքավը պըեն եկող, ինքն էլ ղոչաղ, վախ էլ չօներ, քյընըմ ար ծըմակը, թա ծըեռքավը աղվես, ըլըրաստրակ փռնի, պերի տոն։ Ամմա մարը թողըմ չար։ Ավետիսը վեչ թա տարավ ար մըծանըմ, այլ օրավ։ Հալա տասը տըրեկան ար, վըեր եշողը գյուդում ար, թա քսանըհինգ տըրեկան ա։ Ծառեր ար պուկում, վարար կյետերավ անց ար կըենըմ, ծըմակին հեյվաններերին քարավ ըսպանում ար։ Հունցը հարըն ասալ ար, մարը Ավետիսին տանըմ ա տըրացուվին կոշտը։ Տըրացուն մին խըրեգյ կյիրիլ-

կարթիլ ա սըվըրցնըմ, ամմա փող չինելի հետի, էլհա տո̄ւս ա կյամ, քյինում դիբի ծըմակը։

Մին դո̄նըմ ծըմակըմը էն իրեք ըլըբաստրակը կյամ ըն ըտրան ըռուչահ ինըմ, հըրցընմ, ասըմ.

— Հո՞ւր տըղա յըս։

Ասըմ ա. — Ցըես Ավետիսըն ըմ, էն հըլիվեր վըերսկանին տըղան։

Ըլըբաստրակնին դա̈ստի ճընանչըմ ըն, իրեք վըեսկե յըն տամ, տոն ղարկըմ։ Ավետիսն էլ պերըմ ա մորը տամ։

Մին օր էլ մարը տեսնըմ ա, վեր Ավետիսը թաքուն օղըմ ա պըցրա̈նա̈, հորը թըվա̈նգյը պատան յոր օնի։ Մարը թըվա̈նգյը տամ ա տըղին, համ էլ հորն անա նաղլ անըմ։

Մին օր էլ Ավետիսը թըվա̈նգյը օսավը քըցած կյամ ա տոն, ասըմ. — Ա՛ մար, յըես բիդի քյինա̈մ իմ հոր ճարիմ։

Մարը թողըմ չի։ Ամմա Ավետիսը լըսըմ չի մորը, քյինո̄ւմ ա։

Քյընըմ ա, քյընըմ, հըսնըմ մին մըթեն ծըմակ։ Ըտըղան մին խոխի ծեն ա լըսըմ։ Ավետիսը վազ ա տամ քյընըմ, տեսնըմ քյարվանան յետ մընացած մին խոխա յա, կյո̄ւլերն էլ յրա տեռած օղըմ ըն, թա ըտրան օտին։

Տա թըվա̈նգյը յրա յա անըմ, կյո̄ւլերը փախչըմ ըն, խոխան ազադվըմ ա, ասըմ. — Թ՛ա վըեր կարիս ինձ տանիս մըեր քյարվանին հըսցընիս, իմ հա̈ր քյըեզ մըեծ հարըստոթում կըտա։

Ավետիսը էտ խոխին շըլակըմ ա, տանըմ դիբի ինդի, ըշտեղ էտ խոխան նշանց ա տամ։

Քյընըմ ըն, քյընըմ, վերչը հըսնըմ ըն Շուշի-Ղալին քըմակի զոլին մին պեցուր, պո̄ւլլոր թումբի։ Ըտըղան եշըմ ըն տեսնըմ բիդի Կըրկըժան շենին զոլը էնա կյետին կոխկին չա̈դիրնի կա եր թողած, ծոխ ա պըցրա̈նըմ։ Ըտրանք քյընըմ ըն հըսնըմ էտ կաղնած քյարվանին։ Էտ պուճուր տըղին հա̈րը, վըեր շատ ար ո̄ւրա̈ն տըղին հետան ման յեկալ, ամմա քըթա̈լ չար, շըներին սա̈սին յըրան եր ա կենըմ տո̄ւս կյամ, տեսնըմ էն ա կյամ ըն։ Հա̈րը, մարը շատ ըն ուրխանըմ, Ավետիսին տանըմ ըն լոխան լա̈վ չադիրը, լա̈վ ուտուցընըմ, խըմըցընըմ, փափուկ յորղան-դո̄շա̈կին մեչին քընըցընըմ։ Էքսը վըեր եր ըն կենըմ, հա̈րն ասըմ ա. — Ավետիս, վըեր տու իմ խոխիս քըթա̈լ ըս, սաղ-սալամաթ պերալ, իմ հարստոթունիս կըեսը քյըեզ ըմ տամ։

Ավետիսն ասըմ ա. — Ցըես քյըղզանա վըեշ մին պեն չըմ օղըմ, լհա̈ էս քըշեր էլ թողեցիք ըստեղ կենամ, էքյուց կը քյընա̈մ։

Ըտրա հետի լա̈վ տեղեր ըն քըցըմ։ Տա քոն ա ինըմ։ Էքսը ըռա-

վոտը վրեր եր ա կրենրմ, տեսնրմ ուրան փրթաթալ ըն մին քահնա դյարի մեչի, քյարվանն էլ թողալ ա քյեցալ։ Ավետիսը հրսկանրմ չի, թա խե՞ յրն իտի ըրալ։ Օզրմ ա ետ տրեռնա տոն, մին էլ ասրմ ա. «Մին տրեսնամ ըստեղերք հի՞նչ կա, իմ մար ասալ ա թա՛, վրեր քյարվանը քյընրմ ա, բիդի քյինիս, ման կյաս տրեղը, տեսնաս հի՞նչ ըն թողալ, հի՞նչ չրն թողալ»։

Տա ետ ա տրեռնրմ ման կյամ, տրեսնրմ մին մրեծ, հանգյած կրակի կոխկի մին կյոտի, մին թուրթագյ, մին էլ մին ճաղավ ըրած փափաղ։ Տա լոխ յոր ա օնրմ, կյամ տոն։

Հրսնրմ ա տոն, տրեսնրմ մարը էնա լաց ինում, գյուդում ա, թա տրղան կորալ ա, կյուլի փայ ա տրեռալ։

Վրեր տրղին տրեսնրմ ա, շատ ա ուրխանրմ, ասրմ ա. — Խե՞ յրս էսքան ետացալ, բա վախրմ չը՞ս ծրմակին շանավարներան։ Ավետիսը լոխ մորը նաղլ ա անրմ։ Մարը էտ պենները յոր ա օնրմ, թող անրմ, քրցրմ մին պոճախ։ Տղին էլ ասրմ, վրեր քյինի Ղալին էն լիքը բրզարան օտելի պեներ առնի, պերի։

Ավետիսը քյընրմ ա Շուշի-Ղալան։ Նա տրեսնրմ ա, վրեր մին մրեծ, ղաշանգյ տան առաչի մին թուբուն շահիլ տրղերք, մին-մին չամադան ծեռքներին կաղնած, ըսպասրմ ըն։ Ավետիսը հրրցընրմ ա, թա ըտրանք խե՞ յրն իտի կաղնալ, ամմա էտ շահիլնին շողարը տամ չրն։ Տա քյինրմ ա թուշ բազարը, մարը հինչու ասալ ար առնրմ. խնձորին լավ-լավ տրղերան, տրկողնին լավ-լավ տրղերան, շրմբալութին լավ-լավ տրղերան, չամչին լավ-լավ տրղերան, նոխուդին լավ-լավ տրղերան, խոշկամբարին լավ-լավ տրղերան, փիստաբադամին, նողրլ-նարաթին, խուրմա-ծրերանին, չոր թութ-ճրղուպրրին լավ-լավ տրղերան, էն իրեք ըլրբաստրակին տրված վրեսկավը առնրմ, ետ տրեռնրմ, թա կյա տոն, տրեսնրմ էլհա էն շահիլ, լավ շորեր կյեցրներին տրղերքը հեն ըն ընդեղ կաղնած։

Ըտրանց մին էլ ա պարով տամ, ամմա էլհա բադասխանը տամ չրն. ասրմ ա. — Բալքյաս հայեվուր գյուդում չրք, յա լավ ըք կյեցված ըտրա հետի՞ յա, վրեր ինձ մրհալ չրք տրնում։

Էտ տրղերքը Ավետիսին փասոնին, ընդրա թեը թեգյունքին վրեր եշրմ ըն ջաներնին տող ա ընգնում, վրխելնան նրհետ ասրմ ըն. — Սա թաքավերին ըխճրկանը պալատն ա, էտ ախճիգյն էլ դունյադյոզալի յա, էնքան կյեղեցիկ ա, օզրմ ընք մրեծ կումարներավ բալքյաս ընդրան տրեսնանք։

Ավետիսը կյամ ա տոն, լոխ մորը նաղլ անրմ։ Ասրմ. —Ցրես էլ ըմ օզրմ էն ըխճրկանը տրեսնամ...

Մարն ասըմ ա. — Բալա, էտ քու կործը չի, էտ հու վըեր շատ փող օնի, ընդըրան պըենն ա։

Ավետիսն ասըմ ա. — Չէ, յըես քյըննա̈լ ըիդիմ տըեսնամ։

Ասըմ ա պըրծընըմ, էն քըթա̈ծ կյոտին կապըմ, քյընըմ։ Մարը տըղին ջուբումը մին քանի կապեկ ար տիրալ, տա վըեր ծըեռքը շուրն ա քըցում, փողերը թա հանի, տա էտ պալատին տո̈ռնը պահողին, վըեր թողի նի մըննի, տըեսնըմ ա սըեվ փողերը վըեսկե յա տըեռալ։ Էտ տո̈ռնը պահողն ասըմ ա. — էտ վըեսկավըրտ օրը իրեք դո̈նըմ, ինքն էլ իրեք օր կարող ըս կյաս թաքավերին ըխճըկանը տըեսնաս։

Վըեր Ավետիսը քյընըմ ա, նի մըննըմ, տըեսնում էտ ջա̈հիլնին ո̈ւրա̈նց ափաթ պեներան ըն նաղլ անըմ, ո̈ւրա̈նց ղոչաղոթունան, հա՛յ մունք էս արինք, հա՛յ մունք էն արինք, մունք էս ը՛նք, մունք էն ը՛նք։ Վըեր Ավետիսին էտ օթախըմը լոխ տըեսնըմ ըն, սուս ըն անըմ, մըկնին ծակը օխտը թումանավ ճարըմ չըն, թա նի մըննին։

Էտ ախճիգյը վըեր Ավետիսին տըեսնըմ չի՛, վըեր ընդըրա իրեսկըհատը, բոյը-բուսաթը, շենքը-շընորքը տըեսնըմ չի՛, սիրահարվըմ ա, լոխճին տո̈ւս անել ա տա՛մ։

Ըտրանք ըսկսըմ ըն զո̈ւրո̈ւց անելը, սեր փըշրիլը, ո̈ւրո̈ւր խոսկ տալը, ո̈ւրթո̈ւմ-հավատ անի՛լը։ Իստի իրեք օր, օրը իրեք հետը Ավետիսը կյամ ա էտ ըխճըկանը կոշտը։

Չորսինշի օրը թաքավերը հրամմայըմ ա, վըեր ախճիգյը գյիդա̈, թա էտ տըղին, էտքան փողը ըշտըղա յա։

Թաքավերին ախճիգյը ըտրան քըշերը ո̈ւրա̈ն քըշտին ա թողըմ, վըեր էտ պըենը գյիդա̈։

Ասըմ ա. — Ա՛յ ղաշանգյ տըղա՛, ա՛յ ղոչաղ տըղա՛, ասի տըեսնամ էտքան փողը քյըեզ ըշտըղա՞ յա՛։

Ավետիսն ասըմ ա. — Իմ կյո̈տո̈ւս օժան ա՛, վըեր սըեվ փողերը վըեսկե յա շինը՛մ։

Թաքավերը թաքուն լըսըմ ա, քըշերը թաքուն էտ կյոտին յոր օնըմ, Ավետիսին էլ ըռավոտը ըտըղան տո̈ւս քըցիլ տամ։

Ավետիսը կյամ ա ո̈ւրա̈նց տոն, աշկը ունքան աղու կաթըմ։ Ուրա̈ն մըթկըմը ասըմ ա. — Մին ա, յըես էս ախճիգյը հինչ էլ ինի բեդմա օզիմ, իմ հոր էլ ըշտըեղ ինի, բեդմա ճարիմ, տոն պըերիմ։

Մարըտըղա էլհա ըսկըսըմ ըն փիս ապրիլը։

Մին օր մարն ասըմ ա. — Ավետիս, մին էս փափաղը տիր կըլխիտ, բա̈լքյաս ըստրա մաշին մին պըեն կա, մին հո̈ւնա̈ր կա։

Ավետիսը փափաղը կըլխին ա տընում, էլ ըրվըմ չի։

Մարը ընդրան տրեսնըմ չի, ըսկըսըմ ա կանչիլը։ — Ավետիս, հա՜ Ավետիս...

Ավետիսը թա. — Հի՞նչ ա, ա մար, — ասիլ նըրաստ փափաղը կըլխան յոր ա օնըմ, մարը տրեսնըմ ա, վըր Ավետիսը էնա համին ընդեղ կաղնած, ըշտեղ իլալ ա։

Ըտեղ մարըտըղա կըլխու յըն ընգնըմ, վեր փափաղը տընողը ըրվըմ չի։

Ավետիսը էտ փափաղը կըլխին տիրած քյընըմ ա թաքավերին ըխճըկանը կոշտը, տրեսնըմ էտ ախճիգյը ուրան ղարդան լաց ա ընում։ Փափաղը վըր կըլխան յոր ա օնըմ, էտ ախճիգյը կյամ ա խըտետը ընգնըմ, պըշպըշորվըմ ըն։ Իտի իրեք օր կըենըմ ըն։ Թաքավերը էլհա ըխճըկանը հրամմայըմ ա, վըր փանդը-փիլը գյիդա, ամմա ախճիգյը ասըմ չի։ Կողի ասըմ չի՞, թաքավերը թաքուն աշկ ա ածըմ, գյուդում, փափաղը յոր օնըմ, ուրան տուս քըցըմ։

Էս դոնըմ Ավետիսը լաց ա ինըմ, կյամ ա մորը կոշտը լոխ նաղլանըմ։ Ըտրանա ետը ըսկըսըմ ա թութագյը ածիլը սըվերիլը։ Վըր սըվերըմ ա, ածըմ, մին էլ ա տրեսնըմ ուրանց տոնը տրեղան պուք եկավ, քյընից մին հեռու ծըմակըմ կաղնից։ Մին էլ ա տրեսնըմ չորս զոլան օխծեր, ջանավարնի յրա յըն տրեռալ, թա նի մըննին... Ավետիսը էլհա ըսկըսըմ ա թութագյը ածիլը։ Վըր էրկու հետ ածըմ ա, տոնը էլհա տրեղան պուք ա կյամ, քյինըմ ուրան տրեղը։ Էտ պըենը վըր գյուդում ա, Ավետիսը քյինըմ ա քաղաք։ Էտ ըխճըկանը պալատին առաչին կաղնըմ, տրեսնըմ վըր ըտրա քյուչին ակուշկավը լացի, սոքյի սաս ա կյամ, վըր էտ ախճիգյը ուրան հետի յա լաց ինըմ։

Ավետիսը ըսկըսըմ ա թութագյըն ածիլը։ Թաքավերին պալատը տրեղան պուք ա կյամ, թրուչըմ, քյինըմ մին ղալին, մըթեն ծըմակըմ եր կյամ, չորս զոլը կյուլը-կազան, օխծեր։

Թաքավերը հրամման ա տամ սաղ աշխարքին, թա. — Հու վըր կարի էտ տրժեր տրեղան ուրան ազադի, ախճիգյը ընդրան ա տալու։

Ավետիսը քյինըմ ա, ասըմ։ — Թաքավերն ապրած կենա, յրես կկարիմ ազադիմ։

Վըր թութագյը էրկու հետ ածըմ ա, թաքավերին պալատը տրեղան պուք ա կյամ, թրուչըմ, քյինում ուրան առաչվա տրեղը։ Ախճիգյը ուրխանըմ ա, վըր ուրան սիրածին ա արժանանալու։ Ամմա էտ մուռտառ թաքավերը ուրան խոսկը կադարըմ չի. Ավետիսին անա

Ճուլթճդյը ինքյա օնըմ, ուրան տուն քըցըմ։ Ավետիսը էլհա լացինելավ կյամ ա տուն։ Դե էլ հի՞նչ անի, կողի մարը թողըմ չի, ամմա ինքը եր ա կըենում, թա քյինի սըեվ աշխարքը, օշափներին հաշուդին բաղը, ընդրանց ամարաթը։

Տա մին ճըվարան ա յոր օնըմ, հշղե ինըմ, էտ ըխճըկանը պատկերը, իրեսկըհատը աշկին առաշին, սերը սըրտըմը, էտ սերը ըտրան հույսը-հավատ ա տամ, ամեն տըժեր տըեղա կարըմ ա տուն կյա, օժը իվիլցընըմ ա։

Քյինըմ ա, քյինըմ, շատ ա քյընըմ, թա խըրեգյ, աստուծ ա գյուդում, հեռվան հեռու տըեսնըմ ա մին ամարաթի քըեթ։ Քյընըմ ա հըսնըմ ըտեղ, տըեսնըմ հաղուղին բաղին չորս ղոլը պըեցուր չափար ըրած, էտ չափարին ցըեվքին պըտկըներին էլ մարթի քյալլեքյ նի կոխած... Տու մի ասիլ, էտ մարթկանցը էտ օշափնին ըն կերա՞լ... Ըտահանք Ավետիսին մընան ղոշաղ տըղերք ըն իլալ, եկալ ըն ըտեղ, թա ըտեղ մին ջադու պառավ կա, ընդրանա հըրցընին ուրանց դարդին դարմանը, ամմա կըրացալ չըն։

Ավետիսը էտ պըեցուր չըփարավը պըցրանըմ ա, եր կյամ, նի մըննըմ հաղուղին բաղը։ Հաղուղի բաղ, հի՞նչ բա՞ղ, մին ալամաթ, մին հըրաշկ, մին ճոկ պըեն։ Մըեծ, լիքը-լըցած, սըեվ նան սիպտակ հաղուղին ճիթերը կախ-կախ իլա՞ծ... Ամմա թանագյին կոխկերքին մարթի չուրացած կըլխընի, չուրացած վըեններ, կըլոխ նըյեր կախ տըված մարթիքյ...

Ավետիսը ըտըղան անց ա կըենըմ, քյինում ըտրան կըպած մին օրիշ բաղ։ Ըտեղ տըեսնըմ ա, վըեր օշափնին ուրուր նհետ հոջաթ ըն տամ։ Օշափնին ըտրան տըեսնըմ չըն, ամմա օշափներին մարը ըտրան տըեսնըմ ա, հրամմայում ուրան տըղորցը, վըեր ըտրան կոլ տան։ Էրկու օշափ կյամ ըն, թա կոլ տան, Ավետիսը վըեր ուրան սորավը նի յա շըլալը՞մ, էրկու օշափին կըլոխը պուք ա կյամ։ Իտի լոխ օշափներին կըտորըմ ա, մընըմ ա մարը...

Մար օշափը եր ա կըենըմ կըռեվ անըմ, ըտեղ Ավետիսին սորը կոտրըմ ա։ Ավետիսը դաստի կյողլ ա կըենըմ։

Թաքավերին ախճիգյը ըրազըմը տըեսնըմ ա, վըեր ուրան սիրած տըղան նըեղ տըեղ ա... Տա ուրան փոշտալյոն յըղոնեդյին մին սոր ա տամ, ղարկըմ։ Յըղոնեգյը սորը հըսցընըմ ա Ավետիսին։ Ուրան սիրած ըխճըկանան սորը վըեր ըստանըմ ա, Ավետիսը առաե յա ղուշաղանըմ, տամ ա, էտ օշափներեն մորը կըլոխը կըտրըմ։

Տա ըտըղան քյինըմ ա, վըեր էն շադու պառավին քըթնի, հըր-

ցրնի, թա հո՞ւնց բիդի ուրան հորը ճարի, հո՞ւնց բիդի ուրան սիրածին արժանանա։

Քյընըմ ա, պրցրանըմ մին սարի ղաթավ, հըսնըմ էն ամարաթին, տըլսնըմ մին մըեծ — եքյա, աղու տըվող օխծը էնա ըտեղ ծիլվծալ իլած, կըլնխըն էլ տիրած ամարաթին տոնին քըշտին։ Ըսեղ Ավետիսը վախըմ ա։ Թաքավերին ախճիգյը էլհա արաղ ա տըեսնըմ, վըեր Ավետիսը նըեղ տեղ ա։ Ը՞ր ա կըենըմ ուրան փոշտալոն յըղոնեգյին անավ մին մըծըցընող հիլի ղարկըմ։ Ավետիսը էտ մըծըցնող հիլին տանըմ ա թաքուն տընըմ էտ շահմար օխծին առաչին։ Քըշերավը օխծը ղարթնըմ ա, տըեսնըմ, վըեր ուրան անա մըեծ մին օխծ էնա ուրան թուշումը տեմատեմ կաղնած։ Էտ օխծը օղըմ ա յրա պըրծընի, ամմա վախըմ ա, վըխելան նըհետ քյինըմ ա ընգըմ ծովը։

Ավետիսը ը՞ր ա կըենըմ, քյընըմ, թա ամարաթը նի մըննի, ամմա տըեսնըմ ա տըոները պենդ ծասկած։ Հիշքան չըբչարվըմ ա, կարըմ չի պեց անի։

Տա ըտեղ մին խիլլա կըենըմ ա։ Թաքավերին ախճիգյը էլհա արաղըմը տըեսնըմ ա, վըեր Ավետիսը նըեղ տըեղ ա։ Նա փոշտալյոն յըղոնեգյին մում ա տամ, թա. «Տարա։ Էտ մումը Ավետիսը կոխըմ ա պըլանուն ծակը, տուս օնըմ, տըեսնըմ էնա պըլանուն թաՀրը յրան։ Էտ մումը տամ ա յըղոնեգյին։ Յըղոնեգյը դաստի պերըմ ա, տամ թաքավերին ըխճըկանը։ Թաքավերին ախճիգյը, տանըմ ա դամուրչուն ղակաղ տամ, վըեր էտ չափսավը մին պըլանի շինի։ Պըլանին շինիլանը ետը, յըղոնեգյը պըերըմ ա, տամ Ավետիսին։ Ավետիսը ամարաթին տոնը պըեց ա անըմ, նի մըննըմ տըեսնըմ ըտըեղ էտ ջադու պառավը աղոթկ ա անըմ։ Ավետիսը ըտրանա հըրցընըմ ա, թա հո՞ւնց բիդի ուրան հորը քյթնի, հո՞ւնց ուրան սիրածին արժանանա։ Էտ ջադու պառավըն ասըմ ա. — Քու հար էն ա էն մին սարեն կըլխին։ Ինք առ էս թեփուռը, տար քսի ընդրա վըեններին տակին վըեղին, ետավ տիր ընդրա քըթին տակին, ծըեռաց սըղանալու յա, ը՞ր կըենա։

Էն ըխճըկանը հետի էլ մին ճըվարան հաղուղ ըմ տամ, կըեսը սըեվ, կըեսը սիպտակ։

Սըեվ հաղուղը թաքավերին կտաս օտի, վըեր լհա օտի, դաստի կըլխին յրան ա կաղնելու, ղաչանք ա ընելու, վըեր աղադիս։ Կասիս. — Խոսկ տո, վըեր ախճիգյըտ ինձ կըտաս, քյըեղ աղադիմ, վըեր խոսկ տա, սիպտակ հաղուղան կտաս օտի։ Վըեր օտի, ը՞ր ա կըենալու, դուզ կաղնի։

Ավետիսը շըրշըրվելով, մին թա̈հրա̈վ քյինըմ ա, պըցրա̈նըմ էն սարը, ըշտեղ ո̈ւրա̈ն հա̈րըն ար կապած, չուրացած։ Տա ըտեղ լոխ հըրեշտակներին կըտորըմ ա, ետավ թըեփուրը քըսըմ հորը վըեններին տակին վըեղը, ետավ յոր օնըմ, տինըմ հորը քըթին տակին։

Հա̈րը եր ա կըենըմ, տըեսնըմ տըղան եկալ ա ո̈ւրա̈ն աղադալ, լա̈ց ա ինում, ըսկսըմ ա տըղին պըշպըշորիլը... Ասըմ ա.— Բալաս, տու համ քու հոր օջաղը վառ պըհեցիր, համ էլ քու հոր ըղըդեցիր։

Ըտրանք ետ ըն տըեռնըմ, կյամ տոն, տըեսնըմ մին օրիշ թաքավերի տըղա եկալ ա, թա էտ ախճիգյը օղի։ Ավետիսը նա̈գիրին ըխճըկանը անավ սըեվ հաղուղը ղըրկըմ ա թաքավերին հետի, գյվա̈քյիս թա վըեր ոտի, գյանքը էրգյան կինի, քանի վըեր սըեվ աշխարքան ա պըերալ։

Թաքավերը ոտիլը նըրաստ կըլխին յրան տընգվըմ ա։ Հիշքան ծիքյ ըն տամ, կարըմ չըն, թա պոլան պուք տան։ Տա հըրամման ա տամ, թա. — Հու վըեր ինձ աղագի, ախճիգյըս ընդրան ըմ տալու, թաքավերոթունիս կեսն էլ նըհետը։

Ավետիսանը կըման, վեշ մինը կարըմ չի ըտրան պուք տա։ Նա քյինըմ ա պալատը, սիպտա̈կ հաղուղին ճիթը մուտըցընըմ թաքավերին պըրա̈նա̈ն։ Թաքավերը օզըմ ա թա եր կըենա, ամմա Ավետիսն ասըմ ա. — Չէ, հա̈լա̈ իմ թոխկաս տո, ետավ։

Թոխկան, պերըմ ըն տամ ո̈ւրա̈ն, յոր օնըմ մըեշկը կապըմ։ Սիպտա̈կ հաղուղին ճիթը մին խրեգյ էլ ա մուտուցընըմ, թաքավերն օզըմ ա եր կըենա։

Ասըմ ա. — Չէ, հա̈լա̈ թո̈ւթա̈գյըս նան փափաղըս էլ պերիք ինձ տվիք, ետնան։ Պըերըմ ըն թո̈ւթա̈գյը նան փափաղը տամ ո̈ւրա̈ն։ Ավետիսը մին խըրեգյ էլ ա սիպտա̈կ հաղուղին ճիթը մուտուցընըմ թաքավերին պըրա̈նին։ Թաքավերը օզըմ ա, թա եր կըենա։

Ավետիսըն ասըմ ա. — Չէ, հա̈լա̈ ախճիգյըն էլ պերիք ինձ տըվիք, ետնան։

Քյինըմ ըն ախճիգյըն էլ պըերում ո̈ւրա̈ն տամ։

Ավետիսը սիպտա̈կ հաղուղին ճիթը կոխըմ ա թաքավերին պերանը։ Թաքավերը ոտըմ ա, եր կըենըմ, տըեղը կաղնըմ։

Ըտրանա ետը ո̈ւրա̈ն ախճիգյըն էլ ա տամ Ավետիսին, թաքավերոթունին կըեսն էլ։

Օխտը օր, օխտը քըշեր հըրսանիք ըն անըմ։

Ըտրանք հասին ո̈ւրա̈նց մուրազին, տուք էլ հասնիք ծըեր մուրազին, ա՛յ բալեքյ...